ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՐԻԳՈՐ Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հունվարի 16-ին, չորեքշաբթի օրը, ժամը 11-ին, Երևանում, Կառավարական տանը, Վեհափառ Հայրապետը Նոր տարվա առթիվ այցելություն է տալիս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Հայոց Հայրապետի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի պարոն նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Տ. Գասպարյանը: